

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ «ԱԶԳԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ»
ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Սարվազյան Լիլիթ

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի Փիլիսոփայության
տեսության և պատմության բաժնի վարիչ*

XIX դարի արևմտահայ սահմանադրական մշակույթն արժևորվում է «Ազգային Սահմանադրության» մեջ ամրագրված ազգային ինքնիշխանության, ժողովրդավարական կառավարման, խորհրդարանական վարչակարգի, իշխանությունների բաժանման, ներկայացուցչական ընտրակարգի, ազգային իրավունքների անձեռնմխելիության, հայադավանության պահպանման և այլ սկզբունքներով: Կարևորվում են նաև Օսմանյան կայսրության իրավաքաղաքական կեցության մեջ հայ ազգի սահմանադրական ինքնությունն օրինականացնող Հիմնական օրենքի վերաքննության կարգը, պատճառները, հիմնական սահմանադրությունների անփոփոխելիության, որոշ հոդվածների վերախմբագրման, լուծարման կամ նոր հոդվածների հավելման սկզբունքները:

«Ազգային Սահմանադրությունն» ընդունվեց 1860 թ., վավերացվեց 1863 թ.¹ որպես ներազգային և ազգ - տերություն հարաբերությունները կանոնակարգող Հիմնական օրենք: Բնականաբար, Հայոց Ազգային ժողովը և Գործադիր իշխանությունը պետք է ընդունեին նաև «Սահմանադրությունից» բխող մասնավոր կանոնադրություններ ու օրենքներ, որոնցով պետք է գործառնեին ազգային կեցության տարբեր ոլորտները:

XIX դարի 60-80 թթ. կազմվեցին «Ազգային Կրթության Օրենքը», «Դատաստանական կանոնադրությունը», «Ազգային հիվանդանոցի կանոնադրությունը», «Թաղական խորհուրդների հրահանգները», «Ընտրական կանոնագիրը», «Ազգային ժողովի ներքին կանոնադրությունը», «Տուրքի կանոնագիրը», «Գավառական վարչությունների հրահանգները» և այլն¹:

¹ Տես՝ Սահմանադրական Հրահանգ գաւառաց համար, Իզմիր, (ա. թ.): Հրահանգ վասն կազմութեան Գաւառական Ընդհանուր ժողովոց ՚ի հաստատութիւն գաւառական վարչութեան // Արշալոյս Արարատեան, Ձմիւռնիա, 1861, Թիւ 648-649: Ատենական Կանոնադրութիւն, Կ.Պօլիս, 1870: Օրենք Ազգային վարչական կազմակերպութեան հաստատեալ

Մինչև այս կանոնադրությունների կազմվելը, հայ պաշտոնյաներն առաջնորդվում էին «Սահմանադրության» հիմնական սկզբունքներով ու օրենքներով, քանզի հնարավոր չէր միաժամանակ օրինադրել և՛ Հիմնական օրենքը, և՛ դրանից բխող մասնավոր կանոնները: Նրանք առավել կարևորում էին *սահմանադրական կարգի հաստատումը, ազգային-խորհրդարանական մարմինների ձևավորումը և օրինական կառավարումը* (այս և հաջորդ ընդգծումները հեղինակին են): Հետևաբար, «Սահմանադրության» մեջ ներառվեցին նաև մասնավոր կանոններ, որոնք հաճախ խոչընդոտում էին բուն սահմանադրական օրենքների գործառնությունը:

Ուշագրավ է Արշակ Ալպոյաճյանի դիտարկումը. «...մեր Սահմանադրութիւնը խառնուրդ մըն է հիմնական օրենքի և ներքին կանոնագիրներու, որով անիկա ենթարկուած է, քառակուսի անիւի մը վիճակին և պատճառ եղած է ազգային գործերուն պէտք եղածին չափ նախանձելի վիճակ մը չունենալուն»²: Խոսքը 1863թ. «Սահմանադրության» այն հոդվածների մասին է, որոնք առավել քննադատելի են համարվել: Օրինակ՝ հարկ չկար 57-րդ հոդվածում Ազգային Ընդհանուր Ժողովի անդամների թիվը ստույգ նշել (Կ.Պոլսից՝ 80, գավառներից՝ 40 ընտրվող), մանավանդ որ, 69-րդ հոդվածում սահմանված են Քաղաքական ու Կրօնական ժողովների և Խորհուրդների ատենապետների միավորմամբ կազմված *Համախորհուրդ Ժողովի* ընտրվողների «բաշխման ցուցակ» կազմելու իրավագործությունը, և բնակիչների թվաքանակին համապատասխան Կ. Պոլսի և գավառների *երեսփոխանների թիվը փոփոխելու իրավունքը*: Մանրամասն նշված են նաև ժողովների և խորհուրդների ընտրականոնները, որոնք «...վնասած են Սահմանադրութեան»՝ պատճառ դառնալով, որ «...օրենքի տառին կառչելով, յանուն օրինապահութեան ժողովներ և խորհուրդներ սկզբունքի խնդիրներ յարուցանելով մաքառին և ազգային գործերը վնասեն»³:

Քաղաքական գործիչները քննարկել են *օրենսդիր ու գործադիր գերատեսչությունների իրավունքների անհամաչափության հարցը*: Ազգային ժո-

Յազգային Երեսփոխանական Ժողովոյ, Ի Նիստ Զ. բացման ամի 1880, 5 սեպտեմբեր, Կ.Պոլիս, էջ 153-160: Ծրագիր Ընդհանուր Օրինաց Ազգային Կրթութեան // Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ 1880-1881 նստաշրջանի, Կ.Պոլիս, 1881, էջ 559-608: **Օրմանեան Մ. Արք.**, Դիտողագիր. Երուսաղեմի համար կազմուած նոր Կանոնագիրին գնութիւնն ու լուսաբանութիւնը, Երուսաղեմ, 1915:

² **Ալպոյաճեան Ա.**, Ազգային Սահմանադրութիւնը իր ծագումը եւ կիրառութիւնը // Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի Հայոց, Կ.Պոլիս, 1910, էջ 420:

³ Նույնը: Քննադատելի որոշ հոդվածներ նշել է նաև Շ. Շահիրիկյանը: Տես՝ **Ասում**, Ազգային Սահմանադրութիւնը. Գիծեր մեր մշակոյթի պատմութենէն (Պատմական և քննադատական ուսումնասիրութիւն), Կ.Պոլիս, 1914, էջ 83-92, 105-122:

ղովի իրավագործությունն ու պատասխանատվությունը համարվել են անորոշ, Կրոնական ժողովի դիրքը՝ առավել անկախ, իսկ Քաղաքական ժողովը՝ խորհրդակցական մարմին, բայց պատասխանատու՝ գործադիր իշխանությանը հավասարաչափ: Թաղային խորհուրդների գրեթե անկախ դիրքը և գավառական վարչությունների կազմման եղանակը վեճերի առիթ են դարձել:

Թեև այս իրողությունները բարդացրել են «Սահմանադրության» գործադրությունը, բայց չեն նսեմացրել ***Հիմնական օրենքի ազգային գաղափարախոսական - քաղաքական էությունը:*** Ընդ որում, շատ օրենքների ձևայնացումը պայմանավորված էր ժամանակի պահանջներով ու «Սահմանադրության» խմբագիրների քաղաքական մտադրություններով: Օրինակ՝ Կրոնական ժողովի ինքնուրույնությունը կարևոր էր այն խնդիրների լուծման համար, որոնք հնարավոր չէր ընդգրկել Քաղաքական ժողովի օրակարգում: Խոսքը զինվորագրության, հայ ժողովրդի պատմության դասավանդման, քաղաքական բանտարկյալների ազատագրման, ազգային - կտակների ու սեփականության պաշտպանության և այլ հարցերի մասին է, որոնք, իբրև ***կրոնական*** խնդիր, քննարկվում էին Կրոնական ժողովում:

«Ազգային Սահմանադրության» ընդունումից ի վեր՝ սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը զգալի է եղել տարբեր պատճառներով: Հարցն այն է, թե Սահմանադրության վերաքննության պահանջը որտեղից է բխում՝ ազգային սահմանադրական կեցության բարեփոխման նպատակից, թե օսմանյան կառավարության կամայական պարտադրանքից:

Հայոց սահմանադրական իրավունքը հռչակելով անօտարելի՝ Մաղաքիա Օրմանյանը հաստատում է. «Արտաքին պարագաներու բերմամբ, կամ պատահական դեպքերու հետեւանօք կազմուած դժուարութիւններ կամ արգելքներ, կրնան, այո՛, օրինական կամ սահմանադրական գործողութիւններ խափանել, սակայն ***օրենքի ու սահմանադրութեան գոյութիւնը չեն խափաներ***»: Հետևաբար, ազգային իշխանության պարտքն է հետևել, որ «...օրենք կամ սահմանադրութիւն իւր իսկութեան կամ գոյութեան մէջ չընջուի»⁴: Հայ գործիչները միշտ պահանջել են «Սահմանադրության» ***օրինական վերաքննություն***: Ըստ Հ. Գուրգենի, «Օրենքը քննելու համար պարտաւոր ենք դարձեալ օրենքին դիմել, այսինքն՝ օրենքը օրենքով բարեփոխել»⁵: Այդպիսով, սահմանադրական փոփոխությունների հիմքում պետք է լինեն.

⁴ **Օրմանեան Մ.**, Յիշատակագիրք երկոտասանամեայ Պատրիարքութեան, Պրակ 1, Կ.Պոլիս, 1910, էջ 37-38:

⁵ Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ, Կ.Պոլիս, 1896, էջ 28:

ա) ժողովրդի համագգային կամքը՝ որպես *քնական իրավունք*, բ) Ազգային ժողովի որոշումը՝ որպես *օրինական հենք*, գ) Բ. Դոան կամքը՝ որպես *տիրող կառավարության համաձայնություն և ոչ պարտադրանք՝ ի վնաս ազգի*:

«Ազգային Սահմանադրության» V գլխում սահմանված են սահմանադրության վերաքննության օրինական կարգը, Հիմնական օրենքի անփոփոխելիությունը որոշ պայմանաժամանակում (ըստ 1860-ի Սահմանադրության՝ 3 տարի, իսկ 1863-ին որոշվեց 5 տարի)։ «Ազգային Սահմանադրությունն ազգովին ընդունուելէն ետքն՝ Ազգին որոշ ու յայտնի կամքն կսեպուի, և անոր պարունակած տրամադրութիւնքն անփոփոխելի են Ազգային Վարչութեան կողմէն»⁶:

Մ. Օրմանյանը քննում է Հիմնական օրենքի վերաքննության պատճառները: Նախ՝ սահմանադրական փոփոխությունները պայմանավորված են իրավական կանոնակարգման ենթակա ազգային նոր բնագավառներով, որքան ընդլայնվում է սահմանադրական գործունեության ասպարեզը, բազմանում են նպատակները, և զարգանում է անհատների իրավական գիտակցությունը, «...հարկ կը ծնանի որ կազմակերպութեան տարերք, բաղկացուցիչք և միաւորիչք հաւասարաշափ յառաջադիմութեամբ բարգաւաճին և կատարելագործին»: Ըստ օրենսգետի, վերաքննությունը բնավ չի նշանակում, թե անկատար կամ թերի է «Սահմանադրության» հեղինակների խմբագրած առաջին տարբերակը, այլ «...ժամանակը սահելով և պարագայք փոփոխելով, մեր սահմանադրութեան մէջ ալ հաւասարութիւնը պահելու հարկաւոր շարժումները պէտք է կատարուին»⁷: Հարկ է ուշադրություն դարձնել սահմանադրական կարևոր պահանջին. Վերաքննությունը թույլատրվում է, «...երբ ազգային Վարչութիւնն Սահմանադրութեան գործադրութեան մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ» և «...քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Ընդհանուր ժողովին»⁸:

Անհրաժեշտ է տարբերակել անվերաքննելի ու փոփոխելի կանոնադրությունները: *Վերաքննելի չեն «Սահմանադրության» Հիմնական վեց սրկգրութիւնները*⁹: Անփոփոխելիության հատկանիշով այս սկզբունքները արևմտահայոց իրավագիտակցության մեջ տպավորվել են որպես *Ազգային իրավունքների Հռչակագիր*, որով բացահայտվում են «Ազգային Սահմանադրության»

⁶ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1860, Յօդ. 147, էջ 58:

⁷ Օրմանեան Մ., Հայ Ազգութիւն (Բանախօսութիւն), Կ.Պոլիս, 1880, էջ 51:

⁸ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, 1860, Յօդ. 147, էջ 58:

⁹ Տես՝ նույն տեղում, Հիմնական Սկզբունք, Գլտ Ա-2, էջ 7-12:

րության» **հիմնարար գաղափարները** և բառացի չգրված, բայց տարբեր գըլուխներում արտացոլված **սահմանադրական կառավարման սկզբունքները** (իշխանությունների տարանջատման, ներկայացուցչության, օրինականության և արդարության գերակայության, սոցիալական ներդաշնակության, աշխատանքի բաժանման, հաշվետվության ու հաշվառության և այլն): Բացի այդ, «Սահմանադրութեան վերաքննութիւնն Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական սկզբանց տրամադրութեանցն համաձայն չըլլայ, այն սկզբանց՝ որով ապահովեալ են Ազգին իրաւունքներն, իրաւունք՝ որոնց վրայ Ազգն անգամ չունի իշխանութիւն տնօրէնութեան, զի միանգամայն պարտիք են»¹⁰:

Այդպիսով, **սահմանադրական օրենքների որևէ փոփոխություն չի կարող հակասել վերնորմատիվային ու անվերաքննելի Հիմնական սկզբունքներին կամ չբխել դրանցից**: Հիմնական սկզբունքները սահմանադրական օրենքների մշակման, գործող «Սահմանադրության» մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման, ազգային - վարչական մարմինների գործունեության, ազգային իրավունքների պաշտպանության հիմքն են: Մերժելի է ապագային նպատակներով պարտադրված սահմանադրական որևէ փոփոխություն:

Սահմանադրական փոփոխությունները ենթադրում են բարեփոխումներ ազգային կյանքի տարբեր ոլորտներում: Հիմնական օրենքի վերաքննության անհրաժեշտությունն արտահայտվում է համազգային կամքով, բայց, Օրմանյանի դիտարկմամբ՝ «...այս կետը ուղղակի և միայն՝ ընդհանուր և վարչական ժողովոց իշխանութեան ենթարկեալ և հանճարոյն հաւատացեալ է»¹¹: Անհատներն իրավունք ունեն իրենց օրենսդրական առաջարկները գրավոր հղել Վերաքննիչ հանձնաժողովին, որը կազմված է 20 անդամից (երեքական անդամ՝ Կրոնական ու Քաղաքական ժողովներից, երկուական անդամ՝ Ազգային խորհուրդներից և վեց անդամ՝ Ազգային ժողովից կամ ազգի այլ գործիչներից): «Այս Ցանձնաժողովը կը սահմանէ հարկաւոր դատուած փոփոխութիւնները, որ Ընդհանուր Ժողովը վաւերացնելէն ետքը, Բարձրագոյն Դրան կը ներկայացուին, և Կայսերական հրամանին համեմատ կը գործադրուին»¹²:

Հարկ է նշել, որ «Ազգային Սահմանադրության» վավերացման իրավունքը պատկանում էր օսմանյան կառավարությանը, հետևաբար, սահմանադրականները միտված էին հնարավորինս չփոփոխել Հիմնական օրենքը,

¹⁰ Նույն տեղում, Յօդ. 150, էջ 58-59:

¹¹ Օրմանեան Մ., Հայ Ազգութիւն (Բանախօսութիւն), էջ 51:

¹² Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պօլիս, 1863, Յօդ. 99, էջ 54:

քանզի վավերացումը ենթադրում էր հայերի որոշակի իրավագրկում: 1863 թ. «Սահմանադրության» վերաքննության հարցը բազմիցս դրվել է Ազգային Ժողովի օրակարգում: 1870 թ. քննարկվել, հաստատվել և նույնիսկ հրատարակվել է «Սահմանադրության վերախմբագրված տարբերակը»¹³: Սակայն **քաղաքական նկատառումներով** այն չի ներկայացվել Բ.Դոան վավերացմանը, քանզի առավել հավանական էր, որ օսմանյան կառավարությունը տարիներով ձգձգեր ազգային Հիմնական օրենքի վավերացման գործընթացը: Հետևաբար, մինչև 1915 թ. պաշտոնապես ճանաչված մնաց ու գործադրվեց 1863 թ. Սահմանադրությունը:

Ուշագրավ է «Սահմանադրության» 1860-63 թթ. հարկադրական առաջին վերաքննության վերաբերյալ Մ. Օրմանյանի դիտարկումը. «...սահմանադրութեան շուրջը յուզուող խնդիրները, եւ վերջապէս անոր վերաքննութեան ենթարկուիլը շատ նուազած ու տկարացուցած էին սահմանադրական կոչուած գաղափարներով արծարծուած խնդիրները»¹⁴: Հետագա տարիներին ևս «Սահմանադրության» գործադրությունը մերթ Ընդ մերթ դադարեցվել է վերաքննության պատրվակով: Թեև որոշ հանգամանքներում սահմանադրական փոփոխությունները դիտվում էին ազգային հիմնահարցեր լուծելու ելակետ, Օրմանյանն իր պատրիարքության օրոք (1896–1908 թթ.) միշտ մերժել է վերաքննության Բ.Դոան պահանջը՝ համոզված լինելով, որ «...կառավարութեան պահանջածը ոչ թէ վերաքննութեամբ բարեփոխել էր, այլ իրեն դժպիի երեւցած սահմանադրութիւնը խափանել, սկզբունքն ալ միասին ջնջել, որով ինչ որ ալ ազգէն առաջարկուէր, կամ ետ պիտի չդառնար, կամ թէ անճանաչ ըլլալու չափ խեղաթիւրուած պիտի ըլլար, այն ալ շատ երկար պայմանաժամի մէջ»¹⁵: Ազգադավ այս ձեռնարկը նա միշտ կանխել է կամ տարբեր պատճառներով հետաձգել՝ ժողովրդին բացատրելով. «Դժուար չէր գուշակել թէ կառավարութեան գրլխաւոր նպատակն էր Քաղաքական ժողովը եւ մնայուն երեսփոխանութիւնը եւ ժողովրդական քուէով ընտրութիւնները ջնջել»¹⁶:

Հետևաբար, «Ազգային Սահմանադրութեան» վերաքննութեան մերժումն արդարացվում էր օտար տիրապետության ներքո ազգային սահմանադրական կառույցների ու կառավարման ժողովրդավարական սկզբունքների պահպանման քաղաքականությամբ:

¹³ Տես՝ Ազգային Սահմանադրութիւն, Երկրորդ վերաքննություն, Կ.Պօլիս, 1870:

¹⁴ **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Մասն Գ, Երուսաղէմ, 1927, էջ 4141:

¹⁵ Նույն տեղում, էջ 5095:

¹⁶ **Օրմանեան Մ.**, Խոիք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղէմ, 1929, էջ 208:

Զմերժելով ժողովրդավարական սկզբունքները՝ հայ որոշ գործիչներ «Սահմանադրության» թերություններից մեկը համարում էին գործադիր իշխանության բոլոր սուբյեկտների **պարտադիր ընտրովիության կարգը**: Ըստ Օրմանյանի, «Դիտելու կէտ մըն է, որ բոլոր սահմանադրական օրէնսդրութեանց մէջ ընդունուած չէ մատակարար մարմինները ուղղակի ժողովրդական քուէով ընտրել»¹⁷: Ճիշտ է, ազգային որոշ պաշտոններ ժամանակավորապէս դարձան **նշանակովի**, բայց ընտրությունները չբացառվեցին: Պարզապէս Բ.Դռան բռնությունները ենթադրելով՝ «...նոյն իսկ ժողովուրդներ... քուէարկութենէ կը ջանային խուսափիլ, եւ պատրիարքաբան կը դիմէին ուղղակի անուանմամբ (նշանակմամբ-Լ.Ս.) գոհանալ, եւ հաւանական նեղութիւններէ եւ անտեղի միջադէպներէ զիբէնք ազատ կացուցանել»¹⁸:

Բ.Դռան պաշտոնական արգելքներն առավել ազդեցին Ազգային Կենտրոնական իշխանության գործունեության վրա, իսկ հայկական գավառներում Ազգային վարչական ժողովներն ու խորհուրդները գործեցին ընդունված կանոնակարգի համաձայն՝ անգամ «Սահմանադրության» գործառնության կասեցումից հետո: Այս բացառիկ իրողությունը վկայում է հայ ազգի իրավական ու քաղաքական բարձր գիտակցականությունը և ազգային սահմանադրական մշակույթի կենսունակությունն ու անօտարելիությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են «Ազգային Սահմանադրության» վերաքննության կարգը, պատճառները, հիմնական օրենքների անփոփոխելիության, որոշ հոդվածների վերախմբագրման, լուծարման կամ նոր հոդվածների հավելման սկզբունքները: Հիմնավորվում է, որ վերաքննելի չեն «Սահմանադրության» տեսական - գաղափարական հիմքը կազմող Հիմնական վեց սկզբունքները և չգրված, բայց տարբեր գլուխներում արտացոլված սահմանադրական կառավարման սկզբունքները: Սահմանադրական փոփոխությունների հիմքում պետք է լինեն. ա) ժողովրդի համագային կամքը՝ որպես բնական իրավունք, բ) Ազգային ժողովի որոշումը՝ որպես օրինական հենք, գ) դռան կամքը՝ որպես տիրող կառավարության համաձայնություն: Մերժելի է ապագային նպատակներով պարտադրված սահմանադրական որևէ փոփոխություն:

¹⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, Մասն Գ, էջ 5097:

¹⁸ Օրմանեան Մ., Յիշատակագիրք երկոտասանամեայ Պատրիարքութեան, Պրակ I, էջ 34:

Բանալի բառեր. «Ազգային Մահմանադրություն», վերաբնության կարգ, անփոփոխելի սկզբունքներ, ազգային համաձայնություն:

ПРИНЦИПЫ ИЗМЕНЕНИЯ “НАЦИОНАЛЬНОЙ КОНСТИТУЦИИ” ЗАПАДНЫХ АРМЯН

Сарвазян Лилит

*Кандидат философских наук, доцент,
Заведующий отделом теории и истории
философии Института философии,
социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье анализируются порядок, причины пересмотра “Национальной конституции”, принципы неизменности основных законов, перередактирования некоторых статей, роспуска или добавления новых статей. Утверждается, что Основные шесть принципов, образующих теоретико-идеологическую основу “Национальной Конституции”, и неписанные, но отраженные в различных главах принципы конституционного управления не подлежат пересмотру. Конституционные поправки должны основываться на: а) общенародной воле народа как естественное право, б) решении Национального собрания как правовая основа, в) воле Порты как согласие правящего правительства. Любые конституционные изменения, внесенные в антинациональных целях, отвергаются.

Ключевые слова: “Национальная Конституция”, порядок пересмотра, непреложные принципы, национальный консенсус.

PRINCIPLES OF AMENDMENTS TO THE “NATIONAL CONSTITUTION” OF WESTERN ARMENIANS

Sarvazyan Lilit

*Candidate of Philosophical Sciences, Associate Professor,
Head of the Department of Theory and History of Philosophy
of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article analyzes the procedure and reasons for the revision of the "National Constitution", the principles of the immutability of fundamental laws, the re-editing of some articles, and the dissolution or addition of new articles. It is argued that the main six principles forming the theoretical-ideological basis of the "National Constitution", and the unwritten principles of constitutional governance reflected in various chapters are not subject to revision. Constitutional amendments must be based on: a) the popular will of the people as a natural right, b) the decision of the National Assembly as a legal basis, c) the will of the Porte as the consent of the ruling government. Any constitutional changes made for anti-national purposes are rejected.

Keywords: "National Constitution", revision procedure, immutable principles, national consensus.